ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2019 թվականի N 14-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1-ին հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման N 1 հավելվածով և հիմք ընդունելով Ժոզեֆ Բիդոյանի ներկայացրած հայտը՝ ***որոշում եմ.***

1. Ժոզեֆ Բիդոյանին Գետամեջ համայնքի 4-րդ փողոցի 36-րդ հասցեում գտնվող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0100) տուն կառուցելու նախագծային փաստաթղթերի մշակման համար տալ նախագծման թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի մարտի 1
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մարտի 2019 թվականի N 15-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրը, տրված՝ 2019 թվականի հունվարի 25-ին և Հովսեփ Հովսեփյանի ներկայացրած դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Հովսեփ Հովսեփյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 14-րդ փողոցի 1-ին փակուղու 3-րդ հասցեի բնակելի կառուցապատման (այգեգործական) հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0220-0005) 1985 թվականին ինքնակամ կառուցած այգետնակը՝ 451 քառակուսի մետր, լողավազանը՝ 16,6 քառակուսի մետր, մառանը՝ 9,4 քառակուսի մետր և պարիսպը՝ 2,1 քառակուսի մետր արտաքին մակերեսներով, քանի որ.
1) տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի մարտի 4
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտի 2019 թվականի N 16-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին համայնք Պտղնի - 1 8-րդ թաղամաս թիվ 10 այգետնակ հասցեում գտնվող Նարինե Աղաջանյանին և Կարեն Արշակյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 19042017-07-0019, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0232-0014/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 16-րդ փողոց N 11 այգետնակ:
2. Վճարել Գետամեջի համայնքապետարանի 900115112063 հաշվեհամարին՝ 3000 (երեք հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի մարտի 6
գ.Գետամեջ